# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀՈՒՇԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ
# ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

2017թվականի հունվարի 9-ին N25-Ն

## *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀՈՒՇԱԿԵՐՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳՐԻԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ի մասի 2-րդ կետով.

*ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝*

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հուշակերտ համայնքի զարգացման հնգամյա ծրագիրը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| *ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝* | *ԿՈՂՄ* | *ԴԵՄ* | *ՁԵՌՆՊԱՀ* |
|---|---|---|---|

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ* *Մ.Առաքելյան*

*2017թվական*

*հունվարի 9-ին*

*ք. Հուշակերտ*

ՀԱՍՏԱՏՎԱԾ
Հայաստանի Հանրապետության
Հուշակերտ համայնքի ավագանու
2017թ. հունվարի 9-ի թիվ N24-Ն որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
# ՀՈՒՇԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ
# 2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
# ԶԱՐԳԱՑՄԱՆ Հ Ն Գ Ա Մ Յ Ա Ծ Ր Ա Գ Ի Ր

Կազմեց՝ համայնքի ղեկավար՝ Ս.Մխիթարյան

Հաստատվել է համայնքի ավագանու 2017թ. հունվարի 9 -ի թիվ 6 նիստի որոշումով

Հուշակերտ — 2017 Թ.
(համայնքի անվանումը)

## Բ ՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն
1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսքը

2. Համայնքի իրավիճակի նկարագրությունը գնահատում:

2.1 Համայնքի ընդհանուր նկարագրությունը:

2.2 Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը:

2.3 Համայնքում իրականացվող ծրագրերը:
2.4 Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսում:

2.5 Համայնքի զարգացման խոչընդոտները և դժվարությունները:
2.6 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և
2.7 սպառնալիքների /ՈՒԹՀՄ/ վերլուծություն:

3 Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում:
3.1 Համայնքի զարգացման տեսլական:
3.2 Համայնքի զարգացման անմիջական նպատակները:
4 ՀՀԶԾ ֆինասավորում:
5 ՀԶԾ մոնիթորինգ:

## Ներածություն

ՀՀ Արմավիրի մարզի Հուշակերտ համայնքի 2017-2021 թթ. հնգամյա զարգացման ծրագիրը (այսուհետ՝ ՀՀԶԾ) համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական, բնական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ է, որը ենթադրում է համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծում և համայնքի տեսլականի իրականացում:

ՀՀԶԾ-ում ներառվում են համայնքի բոլոր պարտադիր խնդիրները և դրանց լուծման նպատակով նախատեսվող միջոցառումները: Միջոցառումները պետք է հստակ նկարագրված լինեն, իսկ նախատեսված արդյունքները՝ չափելի: Դրանց իրականացումը պետք է շարունակաբար մոնիթորինգի ենթարկվի, որպեսզի սահմանված թիրախներից շեղումների դեպքում հնարավոր լինի քայլեր ձեռնարկել միջոցառումներ պլանավորված հուն վերադարձնելու նպատակով: ՀՀԶԾ շրջանակներում իրականացված յուրաքանչյուր միջոցառում պետք է գնահատվի, որպեսզի բացահայտվեն թիրախային արդյունքներից հնարավոր շեղումների պատճառները, մշակվեն միջոցառումների իրականացման ավելի արդյունավետ իրականացման այլընտրանքային տարբերակներ և հետագայի համար դասեր քաղվեն:

Համայնքի զարգացման հնգամյա ծրագիրը այն հիմնական փաստաթղթերից մեկն է, որը մշակվում է համայնքի ղեկավարի և նրա աշխատակազմի կողմից, քննարկվում և հաստատվում է համայնքի ավագանու կողմից և դրվում է գործողության մեջ: Այն իրենից ներկայացնում է համայնքի սոցիալ- տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջություն, որը նախատեսում է ռազմավարական քաղաքականությամբ համայնքի խնդիրների արդյունավետ լուծումը և նպատակային բյուջետավարման գործընթացի իրականացումը: Հնգամյա զարգացման ծրագրի մշակումը լուրջ աշխատանք է, որի կազմակերպմանն անհրաժեշտ է մոտենալ ամենայն պատասխանատվությամբ, կարևոր խնդիրներ են ծրագրի մշակման մեթոդական ցուցումների ապահովումը, ծրագրի առանձին բաժինների մշակման ժամանակացույցի սահմանումն ըստ կատարողների, ծրագրերի մշակման մեջ ներգրավված աշխատակիցների հրահանգավորումը, ծրագրի նախագծի ամփոփումն ու ավագանուն ներկայացնելը:

ՀԶՀԾ-ն մշակվել է՝ հիմք ընդունելով ,Տեղական ինքնակառավարման մասին՚ ՀՀ օրենքով սահմանված՝ տեղական ինքնակառավարման մարմինների իրավասություններն ու լիազորությունները նրանց գործունեության բնագավառներում (ոլորտներում), ՀԶՀԾ-ի մշակման և կառավարման վերաբերյալ համապատասխան հոդվածների դրույթները, ինչպես նաև Արմավիրի մարզպետի կողմից ներկայացված համայնքի հնգամյա զարգացման ծրագրի մշակման մեթոդական ուղեցույցը:

Ներկայացվող ՀԶՀԾ-ն առաջիկա հինգ տարիների համար հանդիսանալու է Հուշակերտ համայնքի զարգացման հիմնական փաստաթղթերից մեկը:

ՀԶՀԾ-ն ներառում է նաև Հուշակերտ համայնքի ղեկավարի և ավագանու անդամների նախընտրական ծրագրերի բաղադրիչները: Այն Հուշակերտ համայնքի ներդաշնակ և համաչափ զարգացման, Հուշակերտ համայնքի բնակիչների բարեկեցության ապահովման

համար առաջիկա հինգ տարիներին ընդունված ծրագիր է, որը հանդիսանալու է համայնքի ամենօրյա փաստաթուղթը:

## 1.Համայնքի ղեկավարի ողջույնի խոսքը

Ողջունում եմ Ձեզ՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հուշակերտ համայնքի բնակիչներին, ավագանուն, համայնքապետարանի և համայնքային ենթակայության բյուջետային հիմնարկների աշխատակիցներին:

Շնորհակալություն Ձեզ, հնգամյա զարգացման ծրագիրը համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական, բնական և մարդկային ռեսուրսների գնահատման նկատմամբ հետաքրքրություն ցուցաբերելու համար:

Հուշակերտ համայնքի զարգացման հնգամյա ծրագրերի կազմումը և կատարումը գերակա խնդիր է:

Համայնքում 2017-21թթ. նախատեսվում է կատարել մի շարք կարևոր աշխատանքներ՝ դրանք են.՝ համայնքի կենտրոնական փողոցների և նոր թաղամասերի փողոցային լուսավորության անցկացում, ասֆալտապատ ճանապարհների վերանորոգում, խմելաջրի ներքին ցանցի վերանորոգում, մսուր-մանկապարտեզի 1-ին մասնաշենքի վերանորոգում, մշակույթի տան վերանորոգում, համայնքի գլխավոր հատակագծի և գոտիավորման նախագծերի մշակում:

Խիստ կարևորություն եմ տալիս գիտելիքներով զինված, համակողմանի և ներդաշնակ զարգացած սերնդի ձևավորմանը: Կցանկանամ, որ այս գիտակցումով առաջնորդվի յուրաքանչյուրը, մանկապարտեզ-դպրոցի մակարդակներով, քանզի մատաղ սերնդին է վստահված մեր ապագան՝ մեր վաղվա պետական, քաղաքական, մշակութային և հասարակական գործիչներին, կրթելու և հայեցի դաստիարակելու խնդիրը: Անհրաժեշտ է ապահովել այն գիտակցումը, որ այդ գիտելիքները պետք է ծառայեն ինչպես իրենց անձնական բարօրությանը, այնպես էլ ազգի ու հայրենիքի հզորացմանը:

Համայնքում պրոբլեմային խնդիրներն են՝ մսուր-մանկապարտեզի 1-ին մասնաշենքի վերանորոգման և մշակույթի տան վերանորոգման խնդիրները /ակնկալվում է պետական միջամտություն/:

Ծրագրի մշակմանը, քննարկմանն ու հաստատման աշխատանքներին իրենց մասնակցությունն են բերում ավագանու, համայնքապետարանի, դպրոցի, մանկապարտեզի, մշակույթի տան, փոստի, և բուժամբուլատորիայի աշխատակազմերն ու անհատ քաղաքացիները: Նշեմ նաև, որ բացի ծրագրով նախատեսված աշխատանքների կատարումից, համայնքապետարանը կարգավորում է տարվա ընթացքում առաջացած խնդիրները՝ առաջնահերթության կարգով:

Շնորհակալություն:

Համայնքի ղեկավար՝ Ս.Մխիթարյան

## 2. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

*Աշխարհագրական դիրքը*

Հուշակերտ համայնքը գտնվում է Արարատյան դաշտավայրում՝ Արմավիրի մարզում՝ ծովի մակարդակից 900 մ բարձրության վրա: Գյուղի կլիման, ինչպես բնորոշ է Արարատյան դաշտի կլիմային, ձմռանը մեղմ է , ամռանը՝ շոգ: Բայց այս վերջին երկու տարում անսպասելիորեն ջերմաստիճանը իջնում է և այգիները ցրտահարվում են:

Վարչական տարածքը կազմում է 514.15 հա:

*Ժողովրդագրություն*

Գյուղում ապրում են 1037 բնակիչներ, որոնցից 49%-ը կազմում են տղամարդիկ, իսկ կանանց թվաքանակը 51% է:

Բնակչության սոցիալական կազմը հետևյալն է.

| հ/հ | տեղեկատվություն | ընդամենը | արական | իգական |
|---|---|---|---|---|
| 1 | բնակչության թվաքանակը, մարդ | 1037 | 518 | 519 |
| 2 | տնային տնտեսությունների թվաքանակը | 214 | X | X |
| 2.1 | *այդ թվում* ժամանակավոր կացարան-ներում /վագոն, տնակ/ բնակվող | 0 | X | X |
| 2.2. | կիսակառույց տներում բնակվող | 2 | X | X |
| 3 | ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների քանակը | 17 | X | X |
| 4 | թոշակառուներ | 91 | 34 | 57 |
| 5 | հաշմանդամներ | 16 | 9 | 7 |
| 6 | միակողմանի ծնողազուրկ երեխաներ | 91 | 0 | 1 |
| 7 | Երկողմանի ծնողազուրկ երեխաներ | 0 | 0 | 0 |
| 8 | փախստականներ | 0 | 0 | 0 |
| 9 | գրանցվածընտրողների ընտրողների թիվը | 788 | X | X |

Բնակարանային տնտեսություն

Համայնքում կա 150 առանձնատուն 3400.0քմ տարածքով: Բնակարանի կարիք ունի 40 երիտասարդ ընտանիք, և գնալով դրանց թիվը աճում է:

Հողօգտագործում

/հեկտար/

| | Ընդամենը | Համայնքում առկա | Պետական | Իրավաբանական և ֆիզիկական անձանց սեփականություն |
|---|---|---|---|---|
| Համայնքի վարչական տարածքը | 514.15 | 514.15 | 0 | 514.15 |
| Գյուղատնտեսական նշանակության հողեր | 470.1 | 470.1 | 0 | 470.1 |
| Պահուստային հողեր | 37.9 | 37.9 | 0 | 37.9 |
| Բնակելի շինությունների տակ հողեր | 61.79 | 61.79 | 0 | 61.79 |
| Արդյունաբերական արտադրական շինությունների տակ հողեր | 3.47 | 3.47 | 0 | 3.47 |
| Ընդերքօգտագործման հողեր | 0 | 0 | 0 | 0 |
| Ճանապարհների տակ հողեր | 47.0 | 47.0 | 0 | 47.0 |
| Առողջապահական, հանգստավայրերի, մարզական ու պատմամշակութային նշանակության հողեր | 3.10 | 3.10 | 0 | 3.10 |
| Անտառային հողեր | 0 | 0 | 0 | 0 |
| Ջրային ֆոնդի հողեր | 5.78 | 5.78 | 5.78 | 0 |
| Հատուկ պահպանվող տարածքներ, արգելոցներ | 0 | 0 | 0 | 0 |
| Համայնքի այլ հողեր | 51.4 | 51.4 | 0 | 51.4 |

2.1 Համայնքի ընդհանուր նկարագրությունը

Հուշակերտ գյուղը գտնվում է Արարատյան դաշտավայրում՝ Արմավիրի մարզում՝ Սարդարապատի հուշահամալիրից քիչ հեռու: Անվանումը ստացել է հուշահամալիրի կառուցումից հետո: Մինչ այդ այն կոչվել է Շախվառուտ: Համայնքը վերաբնակեցվել է 1950թ. Թալինի շրջանի Միջնաձոր և Զորաշեն գյուղի բնակիչներով: Բայց գյուղը կառուցվել է ավելի վաղ, միայն 5 ընտանիք են բնակվել: Համայնքն ապահոված է խմելու ջրով 75%-ով, որը խորքային հորից է դուրս բերվում և այնքան էլ չի համապատասխանում խմելու ջրի նորմաներին: Համայնքի գյուղացիական տնտեսությունները հիմնականում զբաղվում են խաղողի, դեղձի, ծիրանի և բանջարաբոստանային կուլտուրաների արտադրությամբ: Վատն այն է, որ մշակվող հողատարածքների մի մասը ոռոգվում է պոմպակայանի միջոցով, սակայն կարիք կա երեք խորքային հորերի վերանորոգման և երկու նոր խորքային հորերի փորման,: Անասնապահությամբ զբաղվողները հիմնականում արտադրում են կաթ և միս: Անասնակերով ապահոված են:

Համայնքի սեփականություն է հանդիսանում հետևյալ գույքը.

Մշակույթի տունը, մսուր-մանկապարտեզը, գրադարանը, խմելու ջրի ջրամատակարարման համակարգը, ներհամայնքային ոռոգման համակարգը, ներհամայնքային կամուրջը, գերեզմանատունը: Վատթար վիճակում է մսուր-մանկապարտեզը, որը խիստ կարիք ունի հիմնանորոգման: Կոմունալ ջրագծերը լրիվ շարքից դուրս են եկել և ջրերը ներթափանցում են շենքի հիմքի տակ: Գրադարանը համեմատական կարգով ավելի բարվոք է ,մշակույթի տունը վերանորոգման կարիք ունի, իսկ գրադարանը համալրել նոր գրքերով: Խմելու ջրի ներքին ցանցը կառուցվել է 1972թ. և վերանորոգման կարիք ունի, որպեսզի վերացվի ջրի կորուստը, որը կազմում է մոտ 25%: Դրան հակառակ շատ լավ վիճակում է համայնքի ներհամայնքային ոռոգման համակարգը: Համայնքը գազաֆիկացված է 100%: Փողոցների մեծ մասը ասֆալտապատ են , որը կատարվել է 1986 թվականին: Կանոնավոր 30 րոպե ընդմիջումով աշխատում է տրանսպորտը

Դպրոցը կարիք ունի ներքին հարդարման:Չի գործում խմելու ջրի ներքին ցանցը, որը անջատված է: Գործում է միայն բակում տեղադրված ծորակը: Մսուր-մանկապարտեզի շենքը կարիք ունի վերանորոգման և չի գործում: Մսուր-մանկապարտեզային տարիքի երեխաների խնամքը շատ է դժվարանում մանավանդ գյուղատնտեսական աշխատանքների շրջանում:

Համայնքում կա մշակույթի տուն, որը իր հիմնական նպատակին չի ծառայում : Չի գործում ոչ մի խմբակ, երիտասարդությունը իր ազատ ժամանակը անցկացնում է հեռուստացույցի առջև , չի գործում գրադարանը: Մարզահրապարակ չլինելու պատճառով երիտասարդությունը օգտվում է դպրոցի խաղահրապարակից: Համայնքում գործում է նորակառույց «Առողջության պահպանման կենտրոն», որը սպասարկում է նաև հարևան գյուղերին: Կենտրոնը հագեցած է նաև ժամանակակից սարքավորումներով և շտապ օգնության մեքենայով: Բուժ. անձնակազմը վերապատրաստվել է որպես ընտանեկան բժիշկներ: Նորակառույց թաղամասերում անցկացվել է խմելաջրի ներքին ցանց և գազաֆիկացվել է:

Համայնքում չկա կոյուղու ներքին ցանց:

Համայնքը կառավարվում է համայնքի ղեկավարի /համայնքապետի/ կողմից, որն ընտրվում է հինգ տարին մեկ անգամ: Համայնքապետարանը ստեղծել է աշխատակազմ հետևյալ կառուցվածքով.

| | Պաշտոնի անվանումը | հաստիքներ |
|---|---|---|
| 1 | Համայնքի ղեկավար | 1 |
| 2 | Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 |
| | Ընդամենը | 2 |

Համայնքապետարանի աշխատակազմ

| | | |
|---|---|---|
| 1 | Աշխատակազմի քարտուղար | 1 |
| 2 | Առաջատար մասնագետ | 1 |
| 3 | 1-ին կարգի մասնագետ | 1 |
| 4 | 2-ին կարգի մասնագետ / | 3 |
| | Ընդամենը | 6 |

Տեխնիկական սպասարկման աշխատակազմ

| | | |
|---|---|---|
| | Շինարար տեխնիկ | 1 |
| 1 | Հավաքարար | 1 |
| 3 | պոմպավար | 1 |
| | Ընդամենը | 3 |

Կուլտուրայի տուն

| | | |
|---|---|---|
| 1 | կուլտուրայի տան տնօրեն | 1 |
| 2 | պահակ | 1 |
| | Ընդամենը | 2 |

Մանկապարտեզ

| | | |
|---|---|---|
| 1 | պահակ | 1 |
| | ընդամեն | 1 |

## 2. 2 Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակ

Համայնքի 2016թ բյուջեի եկամուտների և ծախսերի մասին տեղեկություններ /հազ.դրամ/

| | Եկամուտների տեսակները | Տարեկան | |
|---|---|---|---|
| | | պլան | կատարող |
| 1. | Հողի հարկ | 5278.8 | 5600.0 |
| 2. | Գույքահարկ | 1680.0 | 1718.0 |
| 3. | Տեղական տուրք | 20.0 | 20.0 |
| 4. | Խմելաջրի վճար | 710.0 | 730.0 |
| 5. | Հողի վարձակալության վճար | 351.67 | 352.0 |

| | | | |
|---|---|---|---|
| 6. | Գույքահարկ շենքերից | 480.0 | 480.0 |
| 7 | ՀՀ պետական բյուջեից համայնքի բյոջեին տրամադրվող այլ դոտացիա | 12344.2 | 12344.2 |
| | Ընդամենը | | |

Ընդհանուր եկամուտների մեջ համայնքի սեփա եկամուտները կազմում է %

| Հատված , | պլան | կատարողական |
|---|---|---|
| համայնքապետարան /օրենսդիրգործադիր մարմին/ | 17303.0 | 17303.0 |
| ընդհանուր բնույթի ծառայ. | 35.0 | 35.0 |
| ընդհանուր բնույթ.հանր.ծառայություն | 0 | 0 |
| աղբահանություն | 650.0 | 650.0 |
| ջրամատակարարում | 31700.0 | |
| մշակույթի տուն | 800.0 | 800.0 |
| այլմշակութա.կազմակերպութ. | 200,0 | |
| հողի օտարում | 0 | 0 |
| սոց.օգնություն | 330.0 | 330.0 |
| պահուստային ֆոնդ | 0 | 0 |
| Ընդամենը | | |

Արտադրվում է խաղող, դեղձ, ծիրան , բանջարեղեն, բոստանային կուլտուրաներ, կաթ և միս:
Սպառվում է հիմնականում հանրապետության շուկաներում և արտահանվում ՌԴ:
Համայնքը ունի մեկ միջնակարգ երկհարկանի դպրոց, որտեղ սովորում են 85 աշակերտ նախատեսված 215 աշակերտի համար: Դպրոցն ունի 23 մանկավարժ:
Մսուր-մանկապարտեզի շենքը եկհարկանի է նածատեսված 120 երեխայի համար չի գործում:
Համայնքում գործում բուժ. ամբուլատորիա, նախատեսված օրական 15-20 մարդու սպասարկման համար10 հոգուց:
Ընտանական նպաստների համակարգում գրանցված են 207 մարդ:
Համայնքի աշխատուժի 75 % զբաղվում է գյուղատնտեսությամբ: 15% - աշխատում է Արմավիր քաղաքում: 10%- ը տնային տնտեսությամբ:

## 2.3 Համայնքում իրականացվող ծրագրեր

Հուշակերտ համայնքի տարածքում պետության կողմից գալիք հինգ տարիների ընթացքում նախատեսվող /շարունակվող/ հանրապետական, մարզային ծրագրեր և միջոցառումներ նախատեսված չեն:

Չեն նախատեսված նաև հարևան համայնքների հետ համատեղ, գալիք հինգ տարիների համար, նախատեսվող (շարունակվող) միջհամայնքային համագործակցության նպատակային ծրագրեր և միջոցառումներ:

Չեն նախատեսված նաև միջազգային և տեղական դոնոր կազմակերպությունների, արտասահմանյան երկրների համայնքների հետ համագործակցության շրջանակներում նախատեսվող (շարունակվող) ծրագրեր և միջոցառումներ:

Չեն նախատեսված նաև տեղացի և արտասահմանյան բարերարների կողմից իրականացվող ծրագրեր:

Չեն նախատեսված նաև համայնքի վարչական տարածքում մասնավոր ընկերությունների կողմից նախատեսվող (շարունակվող) ծրագրեր, ներդրումներ և միջոցառումներ:

Պետության կողմից իրականացվող ծրագրերի ներդրումը խթան կհանդիսանա համայնքի զարգացման համար /սակայն դեռևս այն նախատեսված չէ/:

## 2.4 Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրությունը և ֆինանսական կանխատեսումները

2017-2021թթ. սոցիալ տնտեսական զարգացման հնգամյա ծրագրով ըստ առանձին բնագավառների նախատեսվող ծրագրերի, միջոցառումների և աշխատանքների համառոտ ամփոփագիր

| N | Ծրագրի, միջոցառման, աշխատանքի անվանումը | ծավալը | ֆինանսական միջոցների անհրաժեշտ քանակը | ֆինանսավորման աղբյուրները | | | կատարման ժամկետները | | | | | պատասխանատու |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | համայնքի բյուջե | դոնոր կազմակերպ | /պետ. բյուջե և այլն/ | 2017թ. ծավալը ֆին.միջոց | 2018թ. ծավալը ֆին.միջոց | 2019թ. ծավալը ֆին.միջոց | 2020թ. ծավալը ֆին.միջոց | 2021թ. ծավալը ֆին.միջոց | |
| 1. | Համայնքի կենտրոնական փողոցների և նոր թաղամասերի գիշերային լուսավորության անցկացում /մ/ | 9800 | 3000 | 3000 | - | - | 600 | 600 | 600 | 600 | 600 | համայնքի ղեկավար |
| 2. | Ամֆալտապատ ճանապարհների վերանորոգում /քառ. մ/ | 500 | 3500 | 500 | -3000 | - | | 500 | 100 0 | 100 0 | 100 0 | համայնքի |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 3. | Աջակցություն համայնքի խմելու ջրի ներքին ցանցի վերանորոգման ը /գծ.մետր/ | 450 | 2000 | | 2000 | - | 500. | 500. | 500. | 500. | - | համայնքի |
| 4. | Մսուր-մանկապարտեզ ի 1-ին մասնաշենքի վերանորոգում | 1 | 5600 | 600 | -5000 | - | 1000 | 1000 | 1000 | -1000 | -1600 | համայնքի |
| 5. | Մշակույթի տան վերանորոգում | 1100 | 10000 | . | -10000 | - | 10000 | | | | | համայնքի |
| 6. | Համայնքի գլխավոր հատակագծի և գոտիավորման նախագծերի մշակում | | 500 | 500 | - | - | 500 | | | | | համայնքի |

## 2.5 Զարգացման խոչնդոտներ և դժվարություններ

Հուշակերտ համայնքի սոցիալ–տնտեսական զարգացման համար խոչնդոտները և առնվազն դժվարությունները կարող են առաջանալ ներքոհիշյալ խնդիրներից.

Համայնքում առկա են գյուղատնտեսական արտադրանքի իրացման որոշակի դժվարությունները: Համայնքի մանկապարտեզի երկհարկանի աշենքը արդեն 28 տարուց ավելի չի գործում վերանորոգելու դեպքում այն հնարավոր է օգտագործել ո որում կընդգրկվեին տասնյակեր երեխաներ և կբացվեր նոր աշխատատեղեր:

Համայնքի մշակույթի տանը լոկալ ջեռուցման համակարգ անցկացված չէ և կարիք ևս վերանորոգման, որը սպորտին, մշակույթին վերաբերվող միջոցառումների փակատար և որակով /նաև ձմռան ամիսներին/ անցկացնելու նպատակով խիստ անհրաժեշտություն է: Ցանկալի է բարեկարգել վերանորոգել եղած վոլեյբոլի և ֆուտբոլի դաշտերը, համայնքում երիտասարդության շրջանում ակտիվ մշակութային և մարզական կյանքը, լիարժեք մասսայականացնելու նպատակով:

Համայնքում նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության կազմակերպման համար խոչնդոտներ են հանդիսանում դպրոցում, մշակույթի տանը և համայնքապետարանում եղած սակավ ֆինանսական միջոցները, որոնց առկայության դեպքում կբացվեր խմբակներ, դասընթացներ, կկազմակերպվեր զբոսանքներ դեպի հանրապետության տեսարժան վայրեր, բնության գիրկ, մատաղ սերնդին դեռահասներին ու պատանիներին կծանոթացնեին հայրենի բնությանը, գեղատեսիլ վայրերին:

Համայնքում բնակչության սոցիալական պաշտպանություն գործընթացը, ավելի նպատակային, կազմակերպելու համար անհրաժեշտ է ֆինանսական միջոցներ, որոնք կուղղվեն բնակչության բարեկեցության ապահովության համար՝ համայնքի ընտանիքներում յուրաքանչյուր ծնվածների, մահացածների, հիվանդությունների դեպքում կցուցաբերվեր դրամական օգնություն: Հենաշարժական խնդիրներ ունեցող բնակիչներին համապատասխան սայլակներով և սարքավորումներով ապահովելու համար ունենալ միջոցներ: Համայնքում ուսումնական հաստատությունների, խմբակների, բուժ ամբուլատորիայի, մշակույթի տան, հասարակական օբյեկտների մուտքերը հարմարեցնել հաշմանդամության սայլակներին համապատասխան: Նման միջոցառումները կնպաստեն հաշմանդամների մասնակցությանը հասարակական կյանքում:

Համայնքում ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսման համար եղած սպորտային՝ ֆուտբոլի, կարատեի պարապմունքնից զատ նպատակահարմար է բնակչության շրջանում ակտիվացնել՝ կազմակերպել վոլեյբոլի, փազքի, բոքսի և այլ սպորտային խմբակներ, հավաքներ, մրցույթներ, պարապմունքներ:

Համայնքում բնակարանային շինարարության խթանման նպատակով համայնքի բնակիչները, ովքեր ունեն տնամերձ հողամասեր՝ ցանկանում են կառուցել բնակելի տներ, փաստաթղթերի ձեռք բերումը, որը վերաբերվում է տարբեր հիմնարկություններից առացվող թույտվություններին՝ դարձնել էլ ավելի դյուրին և հասանելի: Բնակչության ֆինանսական հնարավորությունների ավելացումը՝ աշխատանքով ապահովված լինելու դեպքում:

Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպումը, ճանապարհային ենթակառույցների կառուցումը և պահպանումը:

Համայնքում պետության պաշտպանության իրականացումը, աղետների ռիսկերի նվազեցումը, արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանությունը ու քաղաքացիական պաշտպանությունը իրականացնելու, կազմակերպելու համար անհրաժեշտ է տեխնիկա և տրանսպորտային միջոցներ:

Համայնքում շրջակա միջավայրի պահպանության համար պակասում են մանկապարտեզում և դպրոցում կազմակերպվող զրույց զեկուցումները, դասընթացները, որն էլ ավելի կխթաներ բնակչության ինքնագիտակցմանը՝ շրջակա միջավայրի նկատմամբ անհատի վերաբերմունքին:

Համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացման, արդյունավետ ու մատչելի բժշկական սպասարկման պայմաններ ստեղծելու համար անհրաժեշտ է լրացուցիչ ֆինանսական մասհանումներ:

Համայնքում յուրաքանչյուրի համամարդկային արժեքների ազատ և անկաշկանդ հաղորդակցման համար անհրաժեշտ է մշակութային միջոցառումների քանակական և որակական ավելացումը՝ ֆինանսական հնարավորության դեպքում:

Համայնքում չի իրագործվում բարեգործություն, որը կխթաներ համայնքում մշակութային, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման և ֆինանսական անկախության գործում:

### 2.6 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
| --- | --- |

| | |
|---|---|
| 1.Համայնքի աշխարհագրական դիրքը/բնակլիմայական պայմանները/<br>2.Համայնքն ունի ԲՈՒՀ-ի ավելի քան 82 շրջանավարտ տարբեր մասնագիտությունների գծով, որոնցից 19-ը աշխատում են դպրոցում, 4-ը աշխատում են գյուղապետարանում, մեկը՝ մշակույթի տանը, 1-ը՝ բուժ,կետում, 11-ը դրսում՝ տարբեր մասնագիտությունների գծով: Նրանք կարող են կազմակերպել համայնքի կրթության ու դաստիարակության, մշակութային, շինարարական աշխատանքները:<br>3.Համայնքն ունի պահեստներ, որոնք սեփականաշնորհված չեն. այստեղ կարելի է կազմակերպել գյուղատնտեսական մթերքների վերամշակման փոքրիկ արտադրություն և ընդգրկել 20-25 աշխատող:<br>4.Համայնքը 30մ հեռու է կենտրոնական ճանապարհից և ապահովված է մշտական տրանսպորտով:<br>Համայնքի մոտով է անցնում միջպետական ճանապարհ:<br>5.Համայնքում կա մեծ աշխատուժ ;<br>աշխատանքը<br>6. Համայնքապետարանի, մշակույթի տան, մանկապարտեզի, բուժ-ամբուլատորիայի, փոստի շենքերի և աշխատանքների բարվոք վիճակը<br>7.Համայնքում գազի, էլեկտրականության, խմելու և ոռոգման ջրերի բավարար մատակարարումը | 1.Վատ վիճակում են նոր քաղամասի երեք փողոցները, որ անձրևներից հետո դառնում են համարյա անանցանելի, իսկ քամու ժամանակ փոշու ամպեր են բարձրանում:<br>2.Վերանորոգման կարիք ունի խմելու ջրի ներքին ցանցը:<br>3.Նկատվում է ծնելիության նվազում, որի հիմնական պատճառը սոցիալ-տնտեսական վիճակն է, ազդում է նաև արտագնա աշխատողների մեծ թիվը:<br>4.Համայնքում մեծ թիվ են կազմում արտագնա աշխատանքի մեկնողները:<br>5.Այս տարիների ցրտահարությունը իր ազդեցությունը<br>6.Իրականացվող երիտասարդական ծրագրերի պակասը<br>7.Հողի հարկի գանձումների դժվարությունները<br>8.Փողոցների ասֆալտապատում,վերանորոգում<br>10.Դպրոցի ներքին հարդարանք՝ վերանորոգում |

| Հնարավորություններ | Սպառնալիքներ |
|---|---|
| 1.Գյուղատնտեսական մթերքների վերամշակման արտադրություն:<br>2. Կաթի վերամշակման ձեռնարկություն:<br>3.Խաղողագործության, պտղաբուծության զարգացում: | 1.Բնակլիմայական պայմանները՝<br>ա/ գլոբալ տաքացումը<br>բ/ երաշտը<br>գ/ ցրտահարությունը<br>դ/ կարկտահարությունը<br>2.Բնակչության արտագաղթը<br>3.Խմելու ջրի ցանցի մաշվածությունը կարող է դառնալ որոշ հիվանդությունների պատճառ: Հիվանդությունների պատճառ կարող է դառնալ նաև խմելու ջրի որակը:<br>4.Վտանգ են ներկայացնում համայնքի մանկապարտեզի շենքի ներքին ցանցի մաշվածությունը, որի պատճառով ջրերը |

| | |
|---|---|
| | լցվում են շենքի տակ, որը կարող է հանդիսանալ պատճառ շենքի փլուզման համար: |

3.Համայնքի նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում

3.1 Համայնքի զարգացման տեսլականը

Հուշակերտ համայնքի հնգամյա զարգացման ծրագրում նախատեսված աշխատանքերի իրականացման արդյունքում:

Նոր թաղամասերի կենտրոնական փողոցների և գիշերային լուսավորության անցկացմա ,ներհամայնքային ճանապահների և փողոցների բարեկարգման` փոսալցման, ասֆալտապատման, խմելու ջրի ներքին ցանցի մասնակի և մսուր մանկապարտեզի նորոգման համար համայնքի բյուջեից կծախսվի 20.5մլն դրամ: Ցուցանիշների արժեքները սահմանվել են տարեկան կտրվացքով:

Աղքատության շեմից ցածր գտնվող տնտեսությունների հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր թվին` 10% :

Համայնքի սեփական եկամուտների աճը` 26.4%:

Համայնքում գրանցված բնակիչների թվի փոփոխությունը /չպայմանավորված բնական աճով/ նախորդ տարվա համեմատ` 1%:

Բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային, հանգստի պայմանները, գյուղը դարձնել բարեկարգ: Բարեփոխումներ կատարելու ճանապարհով նախատեսվում է հասնել հետևյալ նպատակներին.

զարգացնել գյուղատնտեսությունը և անասնապահությունը, խմելու ջրի կորուստները կրճատելու միջոցով ապահովել համայնքում շուրջօրյա խմելու ջուր,անհրաժեշտ միջոցառումներ կազմակերպելու միջոցով բարելավել խմելու ջրի որակը:

Փողոցների կառուցապատման շնորհիվ բարեկարգել փողոցները և բարելավել կենցաղային պայմանները:

3.2 Համայնքի զարգացման անմիջական նպատակներ

## ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ ԹԻՎ 1

**Փողոցների գիշերային լուսավորության անցկացումե**

(Ծրագրի անվանում)

<table>
<tr><td>Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը</td><td colspan="7">Գիշերային լուսավորության անցկացում</td></tr>
<tr><td rowspan="4">Ծրագրի անմիջական նպատակ</td><td colspan="7"></td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>-</td><td>600 000</td><td>600 000</td><td>600 000</td><td>600 000</td><td>600 000</td></tr>
<tr><td rowspan="8">Ծրագրի միջանկյալ արդյունքներ</td><td colspan="7">1.</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td></td><td>200 000</td><td>200 000</td><td>200 000</td><td>200 000</td><td>200 000</td></tr>
<tr><td colspan="7">2.</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td></td><td>400 000</td><td>400 000</td><td>400 000</td><td>400 000</td><td>400 000</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական գործողությունները</td><td colspan="7">11-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>1.1. Ջյութի, մանրախճի,ավազի ձեռք բերում<br>1.2. Տեխնիկայի վարձակալում<br>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>2.1. Ասֆալտի փռում<br>2.2 Ասֆալտի հարդարում ,ամրացում</td></tr>
<tr><td>Ծրագրի բյուջեն</td><td colspan="7">Ընթացիկ ծախսեր՝ 1 000 000 դրամ<br>Կապիտալ ծախսեր՝ 2 000 000 դրամ<br>Ընդհանուր բյուջեն՝ 3 000 000 դրամ</td></tr>
<tr><td>Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ալ ռեսուրսներ</td><td colspan="7">Նյութեր և սարքավորումներ, աշխատուժ</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական ռիսկերը</td><td colspan="7">Փողոցների գիշերային լուսավորության անցկացում</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական շահառուները</td><td colspan="7">Համայնքի բնակիչները</td></tr>
<tr><td>Ծրագրի սկիզբ և</td><td colspan="7">2017-2021թթ.</td></tr>
</table>

<table>
<tr><td>ավարտ</td><td></td></tr>
<tr><td>Ծրագրի համառոտ նկարագրություն</td><td>Համայնքում նոր թաղամասերի կենտրոնական փողոցների գիշերային լուսավորության անցկացման արդյունքում գյուղի փողոցները կլուսավորվեն, կակտիվանա, կհեշտանա բնակչության տեղաշարժը գիշերային ժամերին, գույքի պահպանությունը կբարելավվի, կբարձրանա բնակչության տրամադրությունը:</td></tr>
</table>

## ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ ԹԻՎ 2

**Ներհամայնքային ասֆալտապատ ճանապարհների վերանորոգումը**

(Ծրագրի անվանում)

<table>
<tr><td>Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը</td><td>Ճանապարհների և փողոցների բարեկարգում, փոսալցում</td></tr>
<tr><td>Ծրագրի անմիջական նպատակ</td><td>
<table>
<tr><td rowspan="2">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td></td><td>-</td><td></td><td>500</td><td>1000</td><td>1000</td><td>1000</td></tr>
</table>
</td></tr>
<tr><td>Ծրագրի միջանկյալ արդյունքներ</td><td>
1.
<table>
<tr><td rowspan="2">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td></td><td></td><td></td><td>200</td><td>500</td><td>500</td><td>500</td></tr>
</table>
2.
<table>
<tr><td rowspan="2">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td></td><td></td><td></td><td>300</td><td>500</td><td>500</td><td>500</td></tr>
</table>
</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական գործողությունները</td><td>1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>1.1. Ջրաթի, մանրախճի,ավազի ձեռք բերում<br>1.2. Տեխնիկայի վարձակալում<br>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>2.1. Ասֆալտի փռում<br>2.2 Ասֆալտի հարդարում ,ամրացում</td></tr>
<tr><td>Ծրագրի բյուջեն</td><td>Ընթացիկ ծախսեր՝ 500 000 դրամ<br>Կապիտալ ծախսեր՝ 2000 000 դրամ<br>Ընդհանուր բյուջեն՝ 3500 000 դրամ</td></tr>
<tr><td>Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ</td><td>Աշխատուժ, նյութեր և տեխնիկա</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական</td><td>Ճանապարհների և փողոցների բարեկարգում</td></tr>
</table>

| | |
|---|---|
| ռիսկերը | |
| Ծրագրի հիմնական շահառուները | Համայնքի բնակիչները |
| Ծրագրի սկիզբ և ավարտ | 2017-2021թթ. |
| Ծրագրի համառոտ նկարագրություն | Ներհամայնքային ճանապահների և փողոցների փոսալցման , ասֆալտապատման աշխատանքերի ավարտից հետո կբարելավվի բնակչության նպատակների իրագործում, նախադպրոցականների, դպրոցականների հաճախումները, դպրոց, մանկապարտեզ կհեշտանա: Ավտոմեքենաների օգտագործումը արդյունավետ կլինի, բնակչության աշխատանքի, հանգստի, կուլտուր կենցաղային հարցերի կարգավորման համար բավարար վիճակ կստեղծվի : |

## ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ ԹԻՎ 3

**Աջակցություն խմելու ջրի ներքին ցանցի վերանորոգմանըե**

(Ծրագրի անվանում)

<table>
<tr><td>Կարգադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը</td><td>Նորակառույց թաղամասերում փողոցների ասֆալտապատում</td></tr>
<tr><td>Ծրագրի անմիջական նպատակ</td><td>
<table>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>-</td><td>500</td><td>500</td><td>500</td><td>500</td><td></td></tr>
</table>
</td></tr>
<tr><td>Ծրագրի միջանկյալ արդյունքներ</td><td>
1.
<table>
<tr><td rowspan="4">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td></td><td>200</td><td>200</td><td>200</td><td>200</td><td></td></tr>
</table>
2.
<table>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td></td><td>300</td><td>300</td><td>300</td><td>300</td><td></td></tr>
</table>
</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական գործողությունները</td><td>1.1 Խողովակների ձեռք բերում<br>1.2. Տեխնիկայի վարձակալում<br>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>2.1. ավազի ձեռք բերում<br>2.2 Խողովակների մոնտաժում, փոսալցում</td></tr>
<tr><td>Ծրագրի բյուջեն</td><td>Ընթացիկ ծախսեր՝ 1 000 000 դրամ<br>Կապիտալ ծախսեր՝ 1 000 000 դրամ<br>Ընդհանուր բյուջեն՝ 2000 000 դրամ</td></tr>
</table>

| | |
|---|---|
| Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ | Աշխատուժ, նյութեր և տեխնիկա |
| Ծրագրի հիմնական ռիսկերը | Խմելու ջրի ներքին ցանցի վերանորոգում |
| Ծրագրի հիմնական շահառուները | Համայնքի բնակիչները |
| Ծրագրի սկիզբ և ավարտ | 2017-2021թթ. |
